ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «ԸՆՏԱՆԻՔ»
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



# «ԸՆՏԱՆԻՔ» -Ն ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ

2021

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


ԾՐԱԳԻՐ 3-6

ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՐԳ 7

ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ 8-9

ՀՐԱՎԵՐ 10-11

ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ 12-13

ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ 14-15

ՕՐԱԿԱՐԳ 16

ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ 17-22

ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ 23-25

ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ 26-27

ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ 28-30

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 31-33

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
«14» նոյեմբեր 2021թ.

## Ծրագիր

### ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային միջոցառումների շարքի

**Միջոցառումների իրականացման վայրը՝** «Ընտանիք» կենտրոն, Շիրակի մարզի լեռնային և սահմանամերձ 14՝ Ջրափի, Անիպեմզա, Բավրա, Հայկաձոր, Մուսայելյան, Ձորաշեն, Արփենի, Լուսաղբյուր, Բանդիվան, Ղազանչի, Թավշուտ, Ամասիա գյուղական համայնքներ և Արթիկ քաղաք, Մհեր Մկրտչյանի հուշատուն, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Ձիթողցոնց տուն, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Հայաստանի ազգային պատկերասրահ, պատմության թանգարան, Մատենադարան, Օշական, Ջավախքի կրթամշակութային հաստատություններ:

**Միջոցառման սկիզբը՝** օգոստոս, 2021թ.
**Միջոցառման ավարտը՝** նոյեմբեր, 2021թ.

### Միջոցառման համառոտ նկարագրությունը

**1-րդ փուլ՝** կկազմակերպվի արտադպրոցական կրթության կարևորության վերաբերյալ երկօրյա դասընթացներ՝ Շիրակի մարզի 13 համայնքների կրթամշակութային հաստատությունների և Ջավախքի 17 մանկավարժների համար:
**2-րդ փուլ՝** Շիրակի մարզի 13 համայնքների և Ջավախքի կրթական ու մշակութային հաստատությունների դեռահասների համար «Ընտանիք» կենտրոնի մանկավարժների և շնորհալի սաների կողմից կկազմակերպվեն ազգային արհեստի ու արվեստի, ՏՏ ոլորտի վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման դասեր:
**3-րդ փուլ՝** Շիրակի մարզի տարբեր համայքներում ապաստանած արցախցի դեռահասների համար մասնագիտական դասերի կազմակերպում «Ընտանիք» կենտրոնում:
**Եզրափակիչ փուլ՝** ծրագրի ամփոփում՝ համատեղ ցուցահանդես-միջոցառում և պարգևատրում:
Ծրագրի ակտիվ մասնակից դեռահասների համար էքսկուրսիաների կազմակերպում Մհեր Մկրտչյանի հուշատուն, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Ձիթողցոնց տուն, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան և մարզի այլ պատմամշակութային վայրեր:
**Միջոցառումների նպատակն է՝** բարձրացնել արտադպրոցական կրթության դերը, նպաստել ազգային արհեստների և արվեստի տարածմանն ու պահպանմանը, հայրենասիրական դաստիարակությանը, ուղղորդել դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում: Հեռավոր համայնքների սոցիալապես խոցելի խավի համար կրթամշակութային ծրագրերի մատչելիության և հասանելիության ընդլայնում:
**Միջոցառումների խնդիրներն են՝** համայնքների մանկավարժներին փոխանցել գիտելիքներ՝ արտադպրոցական դաստիարակության կազմակերպման վերաբերյալ, բացահայտել համայնքերում դեռահասների նախընտրելի մասնագիտությունները, սեփական ներուժն ու կարողությունները, դեռահասների շրջանում առաջացնել հետաքրքրություն հայկական արհեստների նկատմամբ, նպաստել համայնքներում մշակութային կյանքի աշխուժացմանը, մասնակիցներին ծանոթացնել Հայաստանի պատմամշակութային վայրերին, ստեղծել միջհամայնքային բարեկամական կապեր:
Միջոցառումները կանցկացվեն «Ընտանիք» կենտրոնում՝ օգոստոս-նոյեմբեր:

### Միջոցառման նկարագրությունը

- ***Միջոցառման հիմնավորումը.*** *միջոցառման իրականացման անհրաժեշտությունը.*

Շիրակի մարզի գյուղական համայնքներում արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները բավարար չեն, բազմաթիվ շնորհալի դեռահասների համար ազգային արհեստի ու արվեստի բնագավառի, ՏՏ ոլորտի շատ մասնագիտություններ անհասանելի են, չկան համապատասխան պայմաններ

դեռահասներին պատվոգրերի հանձնում: Ծրագրի ակտիվ մասնակից՝ «Ընտանիք» կենտրոնի, համայնքների և Շիրակի մարզում տեղավորված Արցախի, դեռահասների համար /որպես մրցանակ/ այցելությունների կազմակերպում Մհեր Մկրտչյանի հուշատուն, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Ձիթողցոնց տուն, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան և այլ պատմամշակութային վայրեր: Ծրագրի վերաբերյալ հարցաթերթիկների լրացում: Արձագանքների հիման վրա վերլուծության կազմակերպում:

**Գործողությունների ծրագրերը, գործողությունների ժամանակացույցը**

| Հ/Հ | Գործողությունների ծրագրերը | Գործողությունների ժամանակացույցը |
|---|---|---|
| 1. | Համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածությունների ձեռքբերում: Մասնակիցների անվանացանկի կազմում, սեմինարավարների ընտրություն | օգոստոս |
| 2. | Ժամանակացույցի և ընթացակարգերի կազմում | օգոստոս |
| 3. | Անհրաժեշտ նյութերի և պարագաների ձեռքբերում | օգոստոս-հոկտեմբեր |
| 4. | Դասընթացներ մանկավարժների համար | օգոստոս |
| 5. | Մասնագիտական դասեր Շիրակի մարզի համայնքներում, «Ընտանիք» կետրոնում և Ջավախքում | սեպտեմբեր -հոկտեմբեր |
| 6. | Համատեղ եզրափակիչ ցուցահանդես-միջոցառում, այցելություն քաղաքի մշակութային օջախներ, պատմամշակութային վայրեր | նոյեմբեր |
| 7. | Տեսանյութի, տեղեկատուի և հաշվետվության պատրաստում | նոյեմբեր |

**Ազդեցությունը և շարունակականությունը**

Ծրագրում ներգրավվածները կկարևորեն սեփական համայնքներում արտադպրոցական կրթության դերը դեռահասների նպատակային զբաղվածության ապահովման, ազգային արհեստի ու արվեստի տարածման ու պահպանման, մասնագիտական կողմնորոշման գործում: Մասնակցելով դասընթացներին՝ մանկավարժները կծանոթանան արտադպրոցական կրթության կազմակերպմանը, կստանան լրացուցիչ մեթոդական աջակցություն և կնպաստեն սեփական համայնքներում ազգային արհեստի ու արվեստի ուսուցմանը, մշակութային կյանքի աշխուժացմանը: Մասնագիտական դասերի շնորհիվ համայնքաբնակ դեռահասներից շատերի համար ուսուցանվող մասնագիտությունները կլինեն նորություն, կառաջանա հետաքրքրություն և սեր տվյալ մասնագիտության նկատմամբ, իրենց նախասիրությունների հիման վրա կբացահայտեն սեփական կարողություններն ու ներուժը: Կենտրոնի սաները հնարավորություն կունենան իրենց մասնագիտական գիտելիքներն ու փորձը փոխանցել հասակակիցներին: Կրթամշակութային ծրագրերը հասանելի դարձել համայնքների սոցիալապես անապահով դեռահասներին:

Փոխայցելությունների միջոցով կամրապնդվի կենտրոն-համայնք կապը, մասնակիցները կծանոթանան Գյումրի քաղաքի, մարզի համայնքների և Հայաստանի պատմամշակութային վայրերին և ազգային արժեքներին: Սահմանամերձ համայնքների միջև կամրապնդվի և կշարունակվի համագործակցությունը: Դեռահասների միջև կհաստատվեն ընկերական և բարեկամական կապեր:

Ազդեցության շարունակականությունը և կայունության ապահովումը երկարաժամկետ հեռանկարում պայմանավորված է մշտապես համատեղ միջոցառումների կազմակերպմամբ, փորձի փոխանակմամբ և գործընկերներին փոխադարձաբար կազմակերպվող կրթամշակութային միջոցառումներում ընդգրկելով:

**Տեսանելիությունը՝**

Միջոցառումների տեսանելիությունը կապահովվի լուսաբանմամբ՝ կրթական կայքէջերում, «Կրթություն» շաբաթաթերթում, սոցիալական ցանցերում, ԶԼՄ-ների միջոցով: Ծրագրի վերաբերյալ կպատրաստվի տեղեկատվական տեսանյութ և տեղեկատու, որոնք կտրամադրվեն համագործակցող կազմակերպություններին: Տեսանյութը կտեղադրվի նաև entanik.am, You Tube կայքէջերում, facebook սոցիալական կայքում:

**Համագործակցություն միջոցառման շրջանակներում**

ինքնարտահայտվելու, սեփական կարողությունների բացահայտման և մասնագիտական կողմնորոշման համար: Ծրագիրը կարժևորի համախմբվածության գործոնը և կնպաստի միջհամայնքային համագործակցության ամրապնդմանը: Վերոնշյալ համայնքների մանկավարժները, մասնակցելով տեսական և գործնական դասընթացներին, պատրաստ կլինեն բացահայտել իրենց համայնքներում նախընտրելի մասնագիտությունները և կազմակերպել դրանց ուսուցումը գյուղաբնակ դեռահասների համար: Կրթամշակութային ծրագրերը հասանելի կդառնան նաև համայնքների համար:

• ***Ծրագրի նպատակներն ու խնդիրները***. նպաստել ազգային արհեստների և արվեստի տարածմանն ու պահպանմանը, ուղղորդել դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում, խթանել մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, բացահայտել շնորհալի դեռահասներին,

• կարևորել արտադպրոցական կրթության դերը մասնակիցների համակողմանի և ներդաշնակ զարգացման գործում: Մասնակիցներին ծանոթացնել Գյումրի քաղաքի և Հայաստանի պատմամշակութային վայրերին: Սաների մոտ սերմանել հայրենասիրություն, կամք, պատրաստակամություն, կարևորել հայ զինվորի դերը ազգային բանակի կազմավորման ու անկախ պետության կայացման գործում: Խթանել և ընդլայնել համագործակցությունը:

## Միջոցառման կառուցվածքը

• *Միջոցառման իրականացման համար նախատեսված աշխատանքները*՝ նախապատրաստումը, *իրականացումը և արդյունքների ամփոփումը:*

***Նախապատրաստում***՝ համագործակցող կազմակերպությունների հետ պայմանավորվածության, տրանսպորտային ծառայության, միջոցառումների համար անհրաժեշտ նյութերի ու պարագաների ձեռքբերում, դասընթացավարի և մասնակիցների ընտրություն, ծրագրի մասնակիցների գործուղման կազմակերպում, ժամանակացույցի, գեղարվեստական մասի և ցուցահանդեսի ընթացակարգերի մշակում:

Ծրագրի իրականացման վերաբերյալ ծալաթերթերի և հարցախույզ թերթիկների պատրաստում, նկարահանող և տեսաֆիլմ պատրաստող կազմակերպության ընտրություն:

***Իրականացում***՝

**1-ին փուլ.**

- ✓ վերապատրաստում համայնքների մանկավարժների համար.

  արտադպրոցական կրթության վերաբերյալ տեսական դասընթացների անցկացում «5-18 տարեկան դեռահասների արտադպրոցական կրթության կարևորությունը և հիմնախնդիրները», «Համայնքային հետազոտության իրականացման և դեռահասների կրթադաստիարակչական կարիքների բացահայտման մեթոդների ուսումնասիրում», «Մասնագիտական և դաստիարակչական աշխատանքների ծրագրերի կազմման եղանակները» թեմաներով,
- ✓ գործնական դասընթացների կազմակերպում «Ընտանիք» կենտրոնի ուսուցողական խմբակներում,
- ✓ կլոր սեղան – քննարկում:

**2-րդ փուլ.**

- ✓ արցախցի դեռահասների համար մասնագիտական դասերի կազմակերպում «Ընտանիք» կենտրոնում,

**3-րդ փուլ**

- ✓ Ջավախքի և Շիրակի մարզի լեռնային, սահմանամերձ համայնքների դեռահասների համար մասնագիտական դասերի անցկացում՝ «Ընտանիք» կետրոնի մանկավարժների և շնորհալի սաների կողմից:

**Եզրափակիր փուլ.**

- ✓ Մասնագիտական դասերին մասնակից համայնքների դեռահասների և կենտրոնի սաների պատրաստած աշխատանքների համատեղ ցուցադրում «Ընտանիք» կենտրոնում,
- ✓ Գեղարվեստական ելույթներ՝ «Ընտանիք» կենտրոնի, Շիրակի մարզի համայնքների, արցախցի դեռահասների մասնակցությամբ:

**Արդյունքների ամփոփում.** դասընթացներին մասնակից մանկավարժներին մասնակցության վկայականների, համագործակցող կազմակերպություններին շնորհակալագրերի, ակտիվ մասնակից

Միջոցառման շրջանակներում համագործակցող կազմակերպություններն են՝ Շիրակի մարզի Արփենիի, Անիպեմզայի, Ջրափիի, Բանդիվանի, Մուսայելյանի, Զորաշենի, Թավշուտի, Լուսաղբյուրի, Ամասիայի, Ղազանչիի, Բավրայի, Լուսաղբյուրի միջնակարգ դպրոցները, Արթիկի Վարազ Սամուելյանի անվան մշակույթի տունը, Ջավախքի կրթամշակութային հաստատությունները, Միեր Մկրտչյանի հուշատունը, Հովհաննես Շիրազի տուն-թանգարանը, Ասլամազյան քույրերի պատկերասրահը, Ձիթողցոնց տունը, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարանը: Ֆրանսիական «Գյումրու բարեկամներ-Ֆրանսիա» հիմնադրամը, «Ընտանիք» բարեգործական հասարակական կազմակերպությունը:

Ծրագրի իրականացման գործում համագործակցող կազմակերպությունները կապահովեն սաների և մանկավարժների մասնակցությունը մասնագիտական դասերին, համայնքները կտրամադրեն դասասենյակներ, կընտրեն իրենց կազմակերպության շնորհալի սաներին՝ համատեղ միջոցառումները պատշաճ մակարդակով անցկացնելու համար, թանգարանները կապահովեն պատշաճ ընդունելություն:

Հաստատությունների հետ համագործակցության արդյունավետության վկայությունն է

համայնքի և ծնողական խորհուրդների կողմից գրավոր խնդրանք-առաջարկների, նախնական պայմանավորվածության, համագործակցության հուշագրերի, ինչպես նաև նախորդ տարիների ընթացքում իրականացրած համանման ծրագրի արդյունքների դրական արձագանքների առկայությունը:

**Միջոցառման մասնակիցները**

- *Միջոցառման մասնակիցների ընդհանուր քանակը*՝ 1500-1800
  - ✓ մասնագիտական դասերի մասնակիցներ՝ Շիրակի մարզի գյուղական համայնքների Արփենի-300, Արթիկ-150, Լուսաղբյուր-80, Թավշուտ-40, Անիպեմզա-30, Մուսայելյան-100, Լուսաղբյուր-80, Հայկաձոր-35, Ջրափի-95, Բավրա-75, Ամասիա–150, Ղազանչի–70, Բանդիվան-65, Ջավախքի կրթամշակութային հաստատություններ՝ 300 դեռահասներ,
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի սաներ և մանկավարժներ՝ 212,
  - ✓ արտադպրոցական կրթության կազմակերպման վերաբերյալ դասընթացների մասնակիցներ՝ 17:
- *Միջոցառման մասնակիցների նկարագրությունը և ընտրության կարգը*՝
  - ✓ «Ընտանիք» կենտրոնի տարբեր միջազգային, հանրապետական, մարզային մրցույթներին մասնակցած, արդյունքներ գրանցած, շնորհալի, մասնագիտական գիտելիքներ ու հմտություններ ունեցող սաներ, մանկավարժներ:
  - ✓ Բարձր լեռնային և սահմանամերձ գյուղական համայնքների աշակերտներ, կրթամշակութային հաստատությունների և սահմանամերձ համայնքների դեռահասներ և մանկավարժներ: Ամփոփիչ փուլի մասնակիցների ընտրությունը կկատարվի միջոցառումների ակտիվ մասնակցության փաստով և տվյալ հաստատության տնօրինության առաջարկով:

Պատասխանատուներ՝ Ս. Պետրոսյան
Ա. Գրիգորյան

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
«20» __________ 2021թ.

**Անցկացման կարգ**

**««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի**

1. Ծրագրի նպատակներն ու խնդիրներն են՝
   - բարձրացնել արտադպրոցական կրթության դերը,
   - ուղղորդել դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում,
   - նպաստել ազգային արհեստների և արվեստի տարածմանն ու պահպանմանը,
   - համայնքների մանկավարժներին փոխանցել գիտելիքներ՝ արտադպրոցական դաստիարակության կազմակերպման վերաբերյալ,
   - բացահայտել համայնքերում դեռահասների նախընտրելի մասնագիտությունները, սեփական ներուժն ու կարողությունները,
   - դեռահասների շրջանում առաջացնել հետաքրքրություն հայկական արհեստների նկատմամբ,
   - նպաստել համայնքներում մշակութային կյանքի աշխուժացմանը,
   - հեռավոր համայնքների սոցիալապես խոցելի խավի համար կրթամշակութային ծրագրերի մատչելիության և հասանելիության ընդլայնում,
   - մասնակիցներին ծանոթացնել Հայաստանի պատմամշակութային վայրերին, ստեղծել միջհամայնքային բարեկամական կապեր:

2. Ծրագրի ղեկավարումը կազմակերպում և իրականացնում է «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը ԿԳՄՍ նախարարության ֆինանսավորմամբ:
3. Ծրագիրն իրականացվում է օգոստոս - նոյեմբեր ամիսներին՝ «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնում, Շիրակի մարզի լեռնային և սահմանամերձ Ջրափի, Անիպեմզա, Բավրա, Հայկաձոր, Մուսայելյան, Ձորաշեն, Արփենի, Լուսաղբյուր, Բանդիվան, Ղազանչի, Թավշուտ, Ամասիա գյուղական համայնքներում և Արթիկ քաղաքում, Ջավախքի կրթամշակութային հաստատություններում:
4. ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային միջոցառումների շարք ծրագիրի իրականացման հիմնական ուղղություններն են՝
5. ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագրի իրականացման հիմնական ուղղություններն են՝

   - ՀՀ Շիրակի մարզի համայնքների մանկավարժների համար արտադպրոցական կրթության վերաբերյալ դասընթացների կազմակերպումը,
   - «Ընտանիք» կենտրոնի շնորհալի սաների և մանկավարժների կողմից Շիրակի մարզի գյուղական համայնքների և Գյումրու հանրակրթական դպրոցների աշակերտների համար «Մասնագիտական կողմնորոշման» դասերի անցկացումը,
   - «Մասնագիտական կողմնորոշման» դասերի ընթացքում գյուղական համայնքների դեռահասների և կենտրոնի սաների պատրաստած համատեղ աշխատանքների և գեղարվեստական ելույթների ցուցադրումը:
   - ծրագրի ակտիվ մասնակից դեռահասների համար էքսկուրսիաների կազմակերպում:

6. ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագրի ծախսերն իրականացնում է «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն ՊՈԱԿ-ը:

7. ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային միջոցառումների շարք ծրագրիի ծախսերն իրականացնում է «Ընտանիք» ՄՊՍ կենտրոն ՊՈԱԿ-ը:
8. Ծրագրի ավարտին համագործակցող կրթամշակութային հաստատությունները կպարգևատրվեն շնորհակալագրերով, իսկ ակտիվ մասնակիցները՝ պատվոգրերով և մրցանակներով:

# ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հաստատում եմ՝
Տնօրեն՝ Ա. Մինասյան
«16» հուլիսի 2021թ.

**ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ**
**««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագրի**

**Օգոստոս-դեկտեմբեր 2021թ.**

| Հ/հ | Իրականացվող գործողություն | Ամսաթիվ | Անցկացման /գործողության/ վայր | Թեմա | Պատասխանատու կատարողներ | Մասնակիցներ |
|---|---|---|---|---|---|---|
| | **Նախապատրաստական աշխատանքներ** | | | | | |
| 1 | Հրավերների պատրաստում և ուղարկում | Օգոստոսի 18-ից 24-ը | «Ընտանիք» կենտրոն | | Տնօրենի տեղակալներ | |
| 2 | Վերապատրաստման դասընթացների օրակարգի կազմում | | | | | |
| 3 | Հարցախուզների պատրաստում | | | | | |
| 4 | Վերապատրաստման դասընթացների համար անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռքբերում | | | | Գնումների համակարգող | |
| 5 | «Մասնագիտական կողնորոշման» դասերի, միջոցառում - ցուցահանդեսի համար անհրաժեշտ նյութերի, պարագաների ձեռք բերում | Սեպտեմբեր-նոյեմբեր | | | | |
| | **1-ին փուլ՝ վերապատրաստման դասընթացներ** | | | | | |
| 6 | Վերապատրաստման դասընթացներ | Օգոստոսի 25-ից 26-ը | «Ընտանիք» կենտրոն | «5-18 տարեկան դեռահասների արտադպրոցական կրթության կարևորությունը և հիմնախնդիրները», «Լրացուցիչ կրթության կարիքների հայտնաբերման մեթոդների ուսումնասիրում», «Մասնագիտական և դաստիարակչական աշխատանքների ծրագրերի կազմում», «Արտադպրոցական կրթության գործընթաց. Անհատական և շերտավոր դասավանդում» | Դասընթացավար, տնօրենի տեղակալներ | ՀՀ Շիրակի մարզի լեռնային, սահմանամերձ գյուղական համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժներ |
| 7 | Ծանոթացում կենտրոնում գործող մասնագիտություններին: Գործնական դասընթացներ ուսուցողական խմբերում | | | | Տնօրենի տեղակալներ | |
| 8 | Կլոր սեղան–քննարկում՝ մտքերի և փորձի փոխանակում, հարցախույզների միջոցով արդյունքների գնահատում | | | | Տնօրեն | Շիրակի մարզի Ջրափի, Անիպեմզա, Բավրա, Հայկաձոր, Մուսայելյան, Ձորաշեն, Արփենի, Լուսաղբյուր, Բանդիվան, Ղազանչի, Թավշուտ, Արթիկ և Ամասիա համայնքների և «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ |
| 9 | Մասնակցության վկայականների հանձնում | | | | | |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 10 | «Մասնագիտական կողնորոշման» դասեր | Սեպտեմբերի 28-ից նոյեմբերի 16-ը | Արփենիի, Լուսաղբյուրի, Թավշուտի, Անիպեմզայի, Մուսայելյանի, Զորաշենի, Հայկաձորի, Ջրափիի, Բավրայի, Ամասիայի, Ղազանչիի, Բանդիվանի միջնակարգ դպրոցներ, Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն | Խեցեգործություն Կարպետագործություն Ասեղնագործություն Ուլունքագործություն Բատիկա Արծաթագործություն Պարարվեստ Փիտրաժային նկարչություն Գեղանկարչություն Փայտարվեստ Ռադիոէլեկտրոնիկա Կվիլինգ Մանրանկարչություն | Տնօրենի տեղակալներ, գեղմասվար | Շիրակի մարզի Ջրափի, Անիպեմզա, Բավրա, Հայկաձոր, Մուսայելյան, Զորաշեն, Արփենի, Լուսաղբյուր, Բանդիվան, Ղազանչի, Թավշուտ, Արթիկ և Ամասիա համայնքների, «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ և դեռահասներ |
| 11 | «Մասնագիտական կողնորոշման» դասեր: Հանդիպում Ախալքալաքի երիտասարդական կենտրոնի «Պատանեկան միության» անդամների հետ: Ճանաչողական այց՝ Ջավախքի պատմամշակութային վայրեր | Հոկտեմբերի 30-ից նոյեմբերի 1-ը | Ախալցխայի, Ախալքալաքի, Նինոծմինդայի կրթամշակութային հաստատություններ, Վահան Տերյանի տուն-թանգարան, Ախալցխայի Ս.Վարդանանց, Ս.Գրիգոր Լուսավորիչ եկեղեցիներ, Թամարա թագուհու ամրոց | | | Ախալցխայի, Նինոծմինդայի, Ախալքալաքի հայ երիտասարդական կրթամշակութային և «Ընտանիք» կենտրոնների մանկավարժներ, սաներ |
| 12 | Ճանաչողական այցեր | Նոյեմբերի 19 | Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի, Հովհաննես Շիրազի հուշատուն թանգարաններ | | | «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ |
| 13 | Ճանաչողական այցեր | Նոյեմբերի 20 | Գյումրու Մհեր Մկրտչյանի հուշատուն թանգարան, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ | | Տնօրենի տեղակալներ, գեղմասվար | «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ |
| | | Նոյեմբերի 29 | Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան | | | |
| **եզրափակիչ փուլ** | | | | | | |
| 14 | Ցուցահանդես-միջոցառում | Դեկտեմբերի 3 | «Ընտանիք» կենտրոն | | Տնօրենի տեղակալներ, գեղմասվար, կիր.արվ. համ. | Ծրագրի մասնակից համայնքերի տնօրեններ, արհեստի և արվեստի բնագավառի ներկայացուցիչներ, մանկավարժներ, դեռահասներ, ծնողներ, ԶԼՄ-ներ |
| 15 | Պատվոգրերի և մրցանակների հանձնում | | | | Տնօրեն | |
| 16 | Ճանաչողական այցեր | Դեկտեմբերի 4 | Մատենադարան, Երևանի ժամանակակից արվեստի և Երվանդ Քոչարի թանգարաններ | | Տնօրենի տեղակալներ, գեղմասվար | «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներ, սաներ, մասնակից համայքների դեռահասներ |
| 17 | Ծրագրի վերաբերյալ տեղեկատուի, տեսանյութի և հաշվետվության պատրաստում | Մինչև դեկտեմբերի 20 | «Ընտանիք» կենտրոն | ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագիր | Տնօրենի տեղակալ, տեխնիկ | |
| | Ծրագրի մասնակիցներ և շահառուներ՝ 1300 անձ | | | | | |

Տնօրենի տեղակալ՝ Ս. Պետրոսյան

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ

«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ

ՏՆՕՐԵՆ

ГНО "ЭНТАНИК" ДЕТСКО-ЮНОШЕСКИЙ ТВОРЧЕСКИЙ ЦЕНТР МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА

ДИРЕКТОР

"ENDANIK" YOUTH CREATIVE CENTRE SNPO OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA

DIRECTOR

---

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի - 3126, «Անի» թաղամաս, 11փողոց, 5/2, Հեռ./Тел./Tel. (0312) 6-64-07, տնօրեն՝ (093) 40-35-32
РА, Ширакская область, г. Гюмри - 3126, "Ани" квартал, улица 11, 5/2 , 5/2, St. 11, "Ani" District, Gyumri - 3126, Shirak Region, RA
E-mail: 403532@gmail.com, info@entanik.am, www.entanik.am

N 045-21
20.08.2021թ.

Վրաստանի Հայ Օգնության Միություն
Ախալքալաքի երիտասարդական կրթամշակութային կենտրոնի
պատասխանատու Կարինե Թադևոսյանին

ՀՐԱՎԵՐ

Հարգարժան տիկին Թադևոսյան.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը Շիրակի մարզի լեռնային, սահմանամերձ գյուղական համայնքների և Ջավախքի մանկավարժների ու դեռահասների համար կազմակերպում է ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագիր:

Ծրագիրի ընթացքում կկազմակերպվի՝

- արտադպրոցական կրթության կարևորության վերաբերյալ երկօրյա դասընթացներ՝ Շիրակի մարզի համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների համար «Ընտանիք» կենտրոնում,
- մասնագիտական կողմնորոշման դասեր Շիրակի մարզի 13 համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների դեռահասների համար «Ընտանիք» կենտրոնի մանկավարժների և շնորհալի սաների կողմից, սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսներին,
- համատեղ ցուցահանդես-միջոցառում և պարգևատրում «Ընտանիք» կենտրոնում:

Ծրագրի նպատակն ու խնդիրներն են՝ օժանդակել դեռահասներին մասնագիտական կողմնորոշմանը, արհեստի և արվեստի ոլորտում նախընտրելի մասնագիտությունների կարողությունների բացահայտմանը, համայնքների և Ջավախքի մանկավարժներին փոխանցել գիտելիքներ՝ արտադպրոցական դաստիարակության կազմակերպման վերաբերյալ, կարևորել արտադպրոցական կրթության դերը, ամրապնդել տարածաշրջանի կրթամշակութային հաստատությունների միջև կապը, ընդլայնել հեռավոր համայնքների սոցիալապես խոցելի խավի համար կրթամշակութային ծրագրերի մատչելիությունը և հասանելիությունը:

Սիրով հրավիրում ենք Ձեր հաստատությանը մասնակցելու ծրագրին:

Խնդրում ենք մինչև օգոստոսի 23-ը հաստատել Ձեր մասնակցությունը և ներկայացնել ծրագրին մասնակից երեք մանկավարժի տվյալները:

Ծրագրային ծախսերը իրականացնում է «Ընտանիք» կենտրոնը:

Ձեզ լրացուցիչ կներկայացվի դասընթացների օրակարգը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝
Տնօրենի պարտականություններ կատարող Ս. Պետրոսյան

Կատարող՝ տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ՝ Սվետլանա Պետրոսյան
Հեռ.՝ /093/ 84 45 20

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
«ԸՆՏԱՆԻՔ» ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ
ՏՆՕՐԵՆ

ГНО "ЭНТАНИК" ДЕТСКО-ЮНОШЕСКИЙ ТВОРЧЕСКИЙ ЦЕНТР МИНИСТЕРСТВА ОБРАЗОВАНИЯ, НАУКИ, КУЛЬТУРЫ И СПОРТА РА
ДИРЕКТОР

"ENDANIK" YOUTH CREATIVE CENTRE SNPO OF THE MINISTRY OF EDUCATION, SCIENCE, CULTURE AND SPORT OF THE REPUBLIC OF ARMENIA
DIRECTOR

ՀՀ, Շիրակի մարզ, ք. Գյումրի - 3126, «Անի» թաղամաս, 11փողոց, 5/2, Հեռ./Тел./Tel. (0312) 6-64-07, տնօրեն՝ (093) 40-35-32
РА, Ширакская область, г. Гюмри - 3126, "Ани" квартал, улица 11, 5/2 , 5/2, St. 11, "Ani" District, Gyumri - 3126, Shirak Region, RA
E-mail: 403532@gmail.com, info@entanik.am, www.entanik.am

N 034-21
20.08.2021թ.

«Անիպեմզայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի
տնօրեն տիկին Հասմիկ Նազարյանին

## ՀՐԱՎԵՐ

Հարգարժան տիկին Նազարյան.

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ը Շիրակի մարզի լեռնային, սահմանամերձ գյուղական համայնքների և Ջավախքի մանկավարժների ու դեռահասների համար կազմակերպում է ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագիր:

Ծրագրի ընթացքում կկազմակերպվի՝

- արտադպրոցական կրթության կարևորության վերաբերյալ երկօրյա դասընթացներ՝ Շիրակի մարզի համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների համար «Ընտանիք» կենտրոնում,
- մասնագիտական կողմնորոշման դասեր Շիրակի մարզի 13 համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների դեռահասների համար «Ընտանիք» կենտրոնի մանկավարժների և շնորհալի սաների կողմից, սեպտեմբեր- հոկտեմբեր ամիսներին,
- համատեղ ցուցահանդես-միջոցառում և պարգևատրում «Ընտանիք» կենտրոնում:

Ծրագրի նպատակն ու խնդիրներն են՝ օժանդակել դեռահասներին մասնագիտական կողմնորոշմանը, արհեստի և արվեստի ոլորտում նախընտրելի մասնագիտությունների կարողությունների բացահայտմանը, համայնքների և Ջավախքի մանկավարժներին փոխանցել գիտելիքներ՝ արտադպրոցական դաստիարակության կազմակերպման վերաբերյալ, կարևորել արտադպրոցական կրթության դերը, ամրապնդել տարածաշրջանի կրթամշակութային հաստատությունների միջև կապը, ընդլայնել հեռավոր համայնքների սոցիալապես խոցելի խավի համար կրթամշակութային ծրագրերի մատչելիությունը և հասանելիությունը:

Սիրով հրավիրում ենք Ձեր հաստատությանը մասնակցելու ծրագրին:

Խնդրում ենք մինչև օգոստոսի 23-ը հաստատել Ձեր մասնակցությունը և ներկայացնել ծրագրին մասնակից մեկ մանկավարժի տվյալները:

Ծրագրային ծախսերը իրականացնում է «Ընտանիք» կենտրոնը:

Ձեզ լրացուցիչ կներկայացվի դասընթացների օրակարգը:

Կանխավ շնորհակալություն:

Հարգանքով՝
Տնօրենի պարտականություններ կատարող ՝ Ս. Պետրոսյան

Կատարող՝ տնօրենի ուսումնադաստիարակչական աշխատանքների գծով տեղակալ՝ Սվետլանա Պետրոսյան
Հեռ.՝ /093/ 84 45 20

# ՊԱՏԱՍԽԱՆ ԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» ՄՊԱԿ ՊՈԱԿ-Ի

Տնօրեն Արթուր Մինասյանին

Հարգելի պարոն Մինասյան, ստացանք Ձեր ուղարկած հրավերը ողջունում ենք այն և հայտնում մեր մասնակցությունը ««Ընտանիք»-ն անիվների վրա» ծրագրին և ներկայացնում երեք մասնակից մանկավարժների տվյալները.

1. Հակոբյան Նազիկ -0700104437- +995 568772043

2.Կարապետյան Ռիտա -07001050177 -555348487

3.Մզիկյան Բորիս-32101030154-597946234

Ախալքալաքի երիտասարդական կենտրոնի տնօրեն Կարինե Թադևոսյան

ARMENIAN RELIEF SOCIETY OF GEORGIA-2001
423351937

23.08.2021թ.

ՀՀ ԿԳՄՍՆ «ԸՆՏԱՆԻՔ»
ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ
ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՊՈԱԿ
Մուտք թիվ 51
«23» 08 2021 թ.

Տեղեկացնում ենք, որ ստացել ենք Ձեր կենտրոնի կողից կազմակերպվող «Ընտանիք» և անիվների վրա» կրթական ծրագրի մասնակցության հրավերը, ողջունում ենք ծրագիրը և սիրով հաստատում ենք մեր հաստատության մասնակցությունը և ուղարկում դասընթացների մասնակից մանկավարժի տվյալները։

Անուն, ազգանուն, հայրանուն- Աննա Վահանի Աթաբեկյան

Անձնագրի տվյալներ- AP0677440

Սոց. քարտի տվյալներ- ՀԾՀ 5109900191

Հեռախոսահամար- 077332045

Մուտք թիվ 43
«23» 08 2021թ.

«Անխլեմգայի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ

Տնօրեն Հ. Նազարյան

23.08.2021թ

# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ











# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՆԿԱՎԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐ









Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Մինասյան

„20„ օգոստոսի 2021թ.

# ՕՐԱԿԱՐԳ

2021թ-ի օգոստոսի 25-ից 26-ը ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթական ծրագրի շրջանակում իրականացվող մանկավարժների վերապատրաստման փուլի

| | | |
|---|---|---|
| 25-ը օգոստոսի | 10:00–10:15 | Մասնակիցների գրանցում |
| | 10:15-10:30 | Ծրագրի ներկայացում<br>Ծանոթացում կենտրոնում գործող մասնագիտություններին, խմբակների գործունեությանը |
| | 10:30-12:00 | «5-18 տարեկան դեռահասների արտադպրոցական կրթության կարևորությունը և հիմնախնդիրները», «Լրացուցիչ կրթության կարիքների հայտնաբերման մեթոդների ուսումնասիրում» |
| | 12:00-13:30 | «Արտադպրոցական կրթության գործընթաց.Անհատական և շերտավոր դասավանդում» |
| | 13:30-14:00 | Ընդմիջում |
| | 14:00-15:30 | Գործնական դասընթացներ մասնագիտական խմբերում |
| | 15:30-15:45 | Ընդմիջում |
| | 15:45- 18:00 | «Մասնագիտական և դաստիարակչական աշխատանքների ծրագրերի կազմում» : Թիմային աշխատանքներ |
| 26-ը օգոստոսի | 10:00-10:15 | Մասնակիցների գրանցում |
| | 10:15-11:45 | Թիմերի կողմից մասնագիտական և դաստիարակչական աշխատանքների ծրագրերի ներկայացում |
| | 11:45-13:15 | Գործնական դասընթացներ մասնագիտական խմբերում |
| | 13:15 – 13:45 | Ընդմիջում |
| | 13:45-15:00 | Գործնական դասընթացներ մասնագիտական խմբերում |
| | 15:00-15:45 | Դասընթացների ամփոփում: Արդյունքներ և մտավախություններ: Հարցաթերթիկների լրացում |
| | 15:45-16:00 | Ընդմիջում |
| | 16:00–17:30 | Կլոր սեղան քննարկում՝ մտքերի և փորձի փոխանակում |
| | 17:30-18:00 | Վկայականների հանձնում |

Տնօրենի տեղակալ՝ Ս. Պետրոսյան

# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ











# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ












# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ









# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ











# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ










# ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ, ՋԱՎԱԽՔԻ ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՎԱՐՊԵՏԱՑ ԴԱՍԵՐ














ვაჰან ტერიანი საგამოფენო დარბაზი
Վահան Տերյան ցուցասրահ



# ՃԱՆԱՉՈՂԱԿԱՆ ԱՅՑԵՐ
# ՋԱՎԱԽՔԻ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՎԱՅՐԵՐ



















## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
## «ԸՆՏԱՆԻՔՆ ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 1. | Ինչպիսի՞ տպավորություններ եք տանում Ձեզ հետ «Ընտանիք» կենտրոնից: Ի՞նչը Ձեզ ամենաշատը դուր եկավ:<br>Տպավորությունները անմոռանալի են: Ամենաշատը դուր եկավ ճանաչողական ծրա-գրերի բազմազանությունը: |
| 2. | Ի՞նչ նոր գիտելիքներ ձեռք բերեցիք «Ընտանիք» կենտրոնում:<br>Ծանոթացա կավագործության հմտություններին, և ամենակարևորը ծանոթացա հայկական հին ու նոր արհեստներին: |
| 3. | Ձեր կարծիքով կենտրոնի գործունեությունը կնպաստի՞ արհեստի և արվեստի պահպանմանն ու տարածմանը:<br>Այո: |
| 4. | Նպաստեց արդյո՞ք կենտրոնի խմբակների աշխատանքը Ձեր մասնագիտական կողմնորոշման հարցում:<br>Այո նպաստեց, համոզված եմ կշարունակեմ ամենամյա կազմակերպությամբ: |
| 5. | Ի՞նչ տվեց Ձեզ «Ընտանիքն անիվների վրա» ծրագրին մասնակցությունը:<br>Ես զբաղմունքով կիրառեցի հին արհեստի և արվեստի աշխատանքների պատրաստում: |
| 6. | Ի՞նչ առաջարկություններ ունեք:<br>Կցանկանամ լինեն ճանաչողական այցեր ավելի հաճախ կազմակերպող դասեր անցկացնել: |

Անուն [illegible]

Ազգանուն [illegible]

07 10. 2021թ.

# ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ

## ՀԱՐՑԱԹԵՐԹԻԿ
## «ԸՆՏԱՆԻՔՆ ԱՆԻՎՆԵՐԻ ՎՐԱ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

| | |
|---|---|
| 1. | Ինչպիսի՞ տպավորություններ եք տանում Ձեզ հետ «Ընտանիք» կենտրոնից: Ի՞նչը Ձեզ ամենաշատը դուր եկավ:<br>Ես արդեն շրջանավարտ ընկերուհուց, անձամբ շատ [illegible] դուր եկավ կարպետի խմբակների [illegible]: |
| 2. | Ի՞նչ նոր գիտելիքներ ձեռք բերեցիք «Ընտանիք» կենտրոնում:<br>[illegible] |
| 3. | Ձեր կարծիքով կենտրոնի գործունեությունը կնպաստի՞ արհեստի և արվեստի պահպանմանն ու տարածմանը:<br>Կարծում եմ այո ☺ |
| 4. | Նպաստեց արդյո՞ք կենտրոնի խմբակների աշխատանքը Ձեր մասնագիտական կողմնորոշման հարցում:<br>Այո նպաստեց |
| 5. | Ի՞նչ տվեց Ձեզ «Ընտանիքն անիվների վրա» ծրագրին մասնակցությունը:<br>Ես կարողացա ինձ [illegible] մշակութային աշխատանքներ, ծանոթացա նոր [illegible], և [illegible] ընկերների: |
| 6. | Ի՞նչ առաջարկություններ ունեք:<br>Շնորհակալություն [illegible] կենտրոնին: [illegible] |

Անուն [illegible]

Ազգանուն [illegible]

30 10 2021թ.

## «Ընտանիք» ՄՊՍ կենտրոնը՝ ««Ընտանիք» -ն անիվների վրա» ծրագրի շրջանակներում Ամասիայի դեռահասների համար վարպետության դաս անցկացրեց

«Ընտանիք» ՄՊՍ կենտրոնը՝ ««Ընտանիք» -ն անիվների վրա» ծրագրի շրջանակներում Ամասիայի դեռահասների համար վարպետության դաս անցկացրեց

«Ընտանիք» կենտրոնի՝ ուլունքագործության, ասեղնագործության, թաղիքագործության, գորգագործության, մանրանկարչության, փիտրաժային նկարչության, կավագործության ու պարարվեստի խմբակների հմուտ մանկավարժներն, վարպետության դասերը սկսեցին Ամասիայի դեռահասներին արվեստի ու արհեստի հնագույն ճյուղերի պատմությունները ներկայացնելով: «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի խմբակների անցկացրած վարպետության բոլոր դասերը մշտապես անցնում են հետաքրքիր ու տարբերվող մոտեցումներով: Վարպետության այս դասերը նաև համայնքների կրթամշակութային հաստատությունների դեռահասների համար կենտրոնի կողմից ազգային արհեստի ու արվեստի մասնագիտական կողմնորոշման նպատակ ունեն: Մանկավարժների պրոֆեսիոնալ աշխատանքի արդյունքում ոչ միայն դեռահասներն, այլև կրթամշակութային հաստատությունների մանկավարժներն մեծ ոգևորությամբ մասնակցեցին վարպետության դասերի գործնական աշխատանքներին: Կենտրոնի խմբակների շնորհալի սաներն էլ իրենց հերթին կենտրոնում ձեռք բերած գիտելիքերը փոխանցեցին հասակակիցներին: «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի ևս մեկ օրն անցավ դեռահասներին ազգային արժեքները լավագույնս ներկայացնելով ՝ արտադպրոցական կրթության միջոցով:

23/11/2021

















## ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի ամփոփում

ԿԳՄՍՆ «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոն ՊՈԱԿ-ն ամփոփեց ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագիրը: «Ընտանիք» կենտրոնը շուրջ 9 տարի հաջողությամբ իրականացնում է ծրագիր՝ ուղղված դեռահասների մասնագիտական կողմնորոշմանը, բացահայտելու սեփական ներուժն արհեստի և արվեստի ոլորտում, և իհարկե այս ամենում կարևորվում է արտադպրոցական կրթության դերը: Ծրագրի առանցքային կարևոր գործոններն են ՝ փոխայցելությունների միջոցով ամրապնդել կենտրոն-համայնք համագործակցությունը, արևորել միջհամայնքային կապը: Այս տարիների ընթացքում ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրից օգտվել և վարպետության դասեր են առել Շիրակի, Արմավիրի և Լոռու մարզերի ավելի քան 100 գյուղական համայնքների հինգ հազարից ավելի մանկավարժներ, տասը հազարից ավելի դեռահասներ, ինչպես նաև Ջավախքի և Արցախի կրթամշակութային հաստատությունների սաներ: Շիրակի մարզի հեռավոր, բարձրադիր ու սահմանամերձ գյուղական համայնքներում արտադպրոցական դաստիարակչական աշխատանքները բավարարելու, ազգային արհեստի ու արվեստի բնագավառում ինքնարտահայտվելու, և շնորհալի դեռահասների համար մասնագիտական կողմնորոշման հարցում օժանդակելու հստակ քայլեր են մշակված: Այս տարվա ծրագրում օգոստոսից մինչև նոյեմբեր ամիսներին Շիրակի մարզի լեռնային և սահմանամերձ 13 գյուղական համայնքներում, Ջավախք աշխարհի կրթամշակութային հաստատություններում մասնագտական կողմնորոշման և վպայետության դասեր անցկացվեցին: 44 օրյա պատերազմի հետևանքով Արցախից տեղահանված ու Շիրակի մարզում ապաստանած դեռահասների համար դասընթացներն կազմակերպվեց «Ընտանիք» կենտրոնում: Ծրագրում ընդգրկվում են համայնքների ու կրթամշակութային հաստատությունների մանկավարժներն էլ, վերջիններիս հնարավորություն է ընձեռվում վարպետության դասերի միջոցով ծանոթանալ արտադպրոցական կրթության կազմակերպմանը, մասնակցել տեսական և գործնական դասընթացներին, պատրաստ լինել բացահայտելու սեփական համայնքներում նախընտրելի մասնագիտությունները և կազմակերպել դեռահասների ուսուցումը: Մասնագիտական կողմնորոշման դասերը համայնքաբնակ դեռահասների համար հետաքրքիր էին և իրենց նախասիրությունների հիման վրա բացահայտեցին սեփական կարողություններն ու ներուժը: Կենտրոնի սաների համար ծրագիրը լավագույն առիթ ու հարթակ է ստեղծում մասնագիտական գիտելիքներն ու փորձը փոխանցելու հասակակիցներին: Ծրագրի ամփոփ միջոցառմանը կենտրոնի սաների հետ համատեղ ելույթներով հանդես եկան նաև ծրագրի հետ համագործակցող համայնքների միջնակարգ դպրոցների սաները: Ընտանիք կենտրոնի տնօրեն՝ Արթուր Մինասյանը դասընթացներին մասնակից մանկավարժներին հանձնեց մասնակցության վկայականներ, համագործակցող կազմակերպություններին շնորհակալագրեր, ակտիվ մասնակից դեռահասներին պատվոգրեր: «Ընտանիք» կենտրոնի, համայնքների և Շիրակի մարզում ապաստանած արցախցի դեռահասներն ««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային այս տարվա ծրագիրն եզրափակեցին մշակութային տպավորիչ այցով դեպի՝ Միեր Մկրտչյանի հուշատուն, Հովհաննես Շիրազի տուն-թանգարան, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Գյումրու ժողովրդական ճարտարապետության ու քաղաքային կենցաղի թանգարան, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան, Հայաստանի ժամանակակից արվեստի թանգարան, Մատենադարան և Օշական:

04/12/2021






















# ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄՊՍ կենտրոն

Кем опубликовано: Էլիզա Ֆրանգուլյան · 12 октябрь 2021 г. ·

««Ընտանիք»-ն անիվների վրա» Ղազանչիում է

««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի միջոցառումների շրջանակում «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներն ու շնորհալի սաները շարունակում են այցելությունները Շիրակի մարզի լեռնային և սահմանամերձ համայնքներ: Հերթական այցը Շիրակի մարզի Ղազանչի գյուղում է: Ղազանչեցի դեռահասների համար կենտրոնի կողմից կազմակերպվեցին ազգային արհեստի ու արվեստի մասնագիտական կողմնորոշման դասեր: Դեռահասները սիրով մասնակցեցին պարապմունքներին, ցանկություն հայտնեցին իրենց համայնքներում նույնպես ունենալ արտադպրոցական ուսուցման հնարավորություն:
Ծրագրը նպաստում է ազգային արհեստների և արվեստի տարածմանն ու պահպանմանը, ուղղորդում դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում, խթանում մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, բացահայտում շնորհալի դեռահասներին:
Համայնքային այցերը շարունակվում են:



ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄՊՍ կենտրոն

Кем опубликовано: Annman Minasyan · 7 октябрь 2021 г. ·

««Ընտանիք»-ն անիվների վրա» Թավշուտում է

««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի միջոցառումների շրջանակում «Ընտանիք» կենտրոնի մանկավարժներն ու շնորհալի սաները շարունակում են այցելությունները Շիրակի մարզի լեռնային և սահմանամերձ համայնքներ: Հերթական այցը Շիրակի մարզի Թավշուտ գյուղում է: Համյանքների կրթամշակութային հաստատությունների դեռահասների համար կենտրոնի կողմից կազմակերպվում են ազգային արհեստի ու արվեստի մասնագիտական կողմնորոշման դասեր: Դեռահասները սիրով են մասնակցում պարապմունքներին, ցանկություն են հայտնում իրենց համայնքերում նույնպես ունենալ արտադպրոցական ուսուցման հնարավորություն:
Ծրագրը նպաստում է ազգային արհեստների և արվեստի տարածմանն ու պահպանմանը, ուղղորդում դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում, խթանում մասնագիտությունների նկատմամբ հետաքրքրության առաջացմանը, բացահայտում շնորհալի դեռահասներին:
Համայնքային այցերը շարունակվում են:



# ԼՈՒՍԱԲԱՆՈՒՄ

ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄՊՍ կենտրոն
Кем опубликовано: Էլիզա Ֆրանգուլյան · 5 ноябрь 2021 г.

«Ընտանիք»-ը տերյանական պոեզիայով ու շնչով հագեցած....

««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի շրջանակներում մշակութային հաջորդ կանգառը Գանձայում եղավ՝ մեծ բանաստեղծի՝ Վահան Տերյանի հայրենի գյուղի տուն-թանգարանում: Բանաստեղծի նիստուկացն ու կենսակերպը ամեն բան տան պատերից ներս ծանոթաց սաները: Շրջեցին նաև վերականգնված տանը կից կառուցված ցուցասրահում, որտեղ ներկայացված փաստաթղթերը, ձեռագրերն ու լուսանկարները պատկերում են Վահան Տերյանի կյանքն ու ստեղծագործական ուղին: Ցուցասրահում են պահպանված նաև բանաստեղծի երկերի հայերեն, ռուսերեն, և այլ լեզուներով հրատարակություններ, տերյանագիտական ուսումնասիրություններ, նրա տեքստերով գրված երաժշտության նոտաներ: Ցուցասրահում ներկայացվում են Վահան Տերյանի կյանքի 7 կարևորագույն փուլերը. մանկության տարիները, Լազարյան ճեմարանում ուսանողական կյանքը, Հովհաննես Թումանյանի և Ավետիք Իսահակյանի հետ ունեցած հանդիպումները, թարգմանչական, գիտական, հասարակական և քաղաքական գործունեությունը, ինչպես նաև իր կյանքի վերջին օրերը Օրենբուրգում: Թանգարանի համալիրի մեջ է նաև Սուրբ Կարապետ եկեղեցին, 1859 թվականին կառուցել է Տերյանի պապը՝ տեր Գրիգորը: Եկեղեցում ««Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնի սաներն օրհնություն ստացան քահանայից: Կրթադաստիարակչական այցերը միայն նպաստում են սաներին ամուր կապել հայ մշակույթի ակունքներին, իսկ այս հարցում «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնն ունի մշակած հստակ ծրագրեր ու քարտեզային քայլեր:



ՀՀ ԿԳՄՍՆ Ընտանիք ՄՊՍ կենտրոն
Кем опубликовано: Էլիզա Ֆրանգուլյան · 5 ноябрь 2021 г.

«Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնը շարունակում է կրթամշակութային միջառցառումներ, վարպետաց դասեր անցկացնել մարզում ու մարզի սահմաններից դուրս...

««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային ծրագրի շրջանակներում ճանաչողական այց ու վարպետության դասեր անցկացնելու առաքելությամբ Հայաստանի պատմական տարածաշրջան՝ Ջավախք են այցելել:«Ընտանիք» կենտրոնի սաներն ու մանկավարժները՝ Ախալցխայի և Նինոծմինդայի կրթամշակութային երիտասարդական կենտրոնի սաների համար վարսավիրության, գեղանկարչության, վիտրաժային նկարչության, գորգագործության, կավագործության, ուլունքագործության վարպետության դասերն համեմեցին՝ ազգային ավանդական երգ ու պարով: Եռօրյա այցը մշակութային երկխոսություն է նաև ջավախահայ սաների համար, սա լավագույն հնարավորությունն է սովորել այն, ինչ իրենց կենտրոնում չեն ուսուցանում: Նինոծմինդայի՝ ԵԿ-ի գորգագործության խմբակի սաները էլ հյուրերին ներկայացրեցին Ջավախքի գորգի ու կարպետի նախշազարդերն՝ իրենց յուրահատկություններով: Դրանք այսօր էլ կիրառում են գորգագործության մեջ: Նինոծմինդայի կրթամշակութային երիտասարդական ու «Ընտանիք» մանկապատանեկան ստեղծագործական կենտրոնների սաներն այնուհետև միասին էքսկուրսիա անցկացրեցին Սաթխա գյուղում: Այցելեցին գյուղի նվիրյալ ուսուցիչ, գրող-հրապարակախոս, բանահավաք Ալբերտ Իսոյանի կյանքի, ստեղծագործական արգասաբեր ուղու և հայրենաշեն գործերի մասին վկայող պատմության թանգարան: Կրթամշակութային ծրագրերով հագեցած օրվա ավարտը՝ Փարվանա լճում էր:



Հաստատում եմ՝

Տնօրեն՝ Ա. Մինասյան

«15» դեկտեմբերի 2021թ.

Հաշվետվություն
««Ընտանիք»-ն անիվների վրա» կրթամշակութային միջոցառումների շարքի

**Միջոցառման համառոտ նկարագրությունը**

**1-րդ փուլ.** Կազմակերպվեց արտադպրոցական կրթության կարևորության վերաբերյալ երկօրյա դասընթացներ՝ Շիրակի մարզի 13 համայնքների կրթամշակութային հաստատությունների և Ջավախքի 17 մանկավարժների համար «Ընտանիք» կենտրոնում:

**2-րդ փուլ.** Անցկացվեց ազգային արհեստի ու արվեստի, ՏՏ ոլորտի վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման դասեր Շիրակի մարզի 13 համայնքներում և Ջավախքի կրթակամշակութային հաստատություններում դեռահասների համար՝ «Ընտանիք» կենտրոնի մանկավարժների և շնորհալի սաների կողմից:

**3-րդ փուլ.** Շիրակի մարզի տարբեր համայքներում ապաստանած արցախցի դեռահասների 5 օրյա մասնագիտական դասեր կազմակերպվեց «Ընտանիք» կենտրոնում:

**Եզրափակիչ փուլ.** Ծրագիրն ամփոփվեց «Ընտանիք» կենտրոնում, համատեղ մասնագիտական դասերին մասնակից համայնքների, արցախցի դեռահասների և կենտրոնի սաների պատրաստած աշխատանքների համատեղ ցուցահանդես-միջոցառումով: Ծրագրին մասնակից համագործակցող կազմակերպություններին տրվեց շնորհակալագրեր, դասընթացներին վերապատրաստված մանկավարժներին մասնակցության վկայականներ: Ակտիվ մասնակից դեռահասները ստացան պատվոգրեր և որպես խրախուսանք վերջիններիս համար կազմակերպվեց ճանաչողական այցեր՝ Մատենադարան, Երևանի ժամանակակից արվեստի, Երվանդ Քոչարի, Գյումրու ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարաններ, Միեր Մկրտչյանի հուշատուն, Ասլամազյան քույրերի պատկերասրահ, Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան, Մինաս Ավետիսյանի տուն-թանգարան:

**Ծրագրի նպատակներն ու խնդիրները**

- Կարևորել և բարձրացնել արտադպրոցական կրթության դերը
- Բացահայտել շնորհալի դեռահասներին
- Առաջացնել հետաքրքրություն ազգային արվեստի և կիրառական արվեստի տարբեր ճյուղերիր նկատմամբ, նպաստել դրանց տարածմանն ու պահպանմանը
- Ուղղորդել դեռահասներին մասնագիտական կողմնորոշման հարցում
- Ընդլայնել քաղաքային կենտրոներից հեռու համայնքների կրթամշակութային ծրագրերիհասանելությանը
- Արտադպրոցական դաստիարակության վարպետաց դասերի անցկացում համայքաբնակ մանկավարժների համար
- Բացահայտել համայնքներում դեռահասների նախընտրելի մասնագիտությունները, սեփական ներուժն ու կարողությունները
- Նպաստել համայնքներում մշակութային կյանքի աշխուժացմանը
- Ստեղծել միջհամայնքային բարեկամական կապեր և միջմշակույթային հարթակ
- Մասնակիցներին ծանոթացնել Հայաստանի և Ջավախքի պատմամշակութային վայրերին

**Ծրագրի թիրախ խումբը /մասնակիցներ/ թիվը**

- «Ընտանիք» կենտրոնի սաներ, մանկավարժներ՝ 450

- Արփենիի, Լուսաղբյուրի, Թավշուտի, Անիպեմզայի, Մուսայելյանի, Ձորաշենի, Հայկաձոր, Ջրափի, Բավրայի, Ամասիայի, Ղազանչիի, Բանդիվանի միջնակարգ դպրոցների, Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն և Ախալցխայի, Ախալքալաքի, Նինոծմինդայի կրթամշակութային հաստատությունների մանկավարժներ, դեռահասներ՝ 850

**Իրականացման վայրը**

- «Ընտանիք» կենտրոն
- Արփենիի, Լուսաղբյուրի, Թավշուտի, Անիպեմզայի, Մուսայելյանի, Ձորաշենի, Հայկաձոր, Ջրափի, Բավրայի, Ամասիայի, Ղազանչիի, Բանդիվանի միջնակարգ դպրոցներ,
- Արթիկի Տիգրան Մանսուրյանի անվան մշակույթի կենտրոն
- Ախալցխայի, Ախալքալաքի և Նինոծմինդայի կրթամշակութային հաստատություններ

**Իրականացման ժամկետը**

- Օգոստոսի 25-26 /Շիրակի մարզի համայնքների և Ջավախքի կրթամշակութային հաստատությունների մանկավարժների երկօրյա դասընթացներ/
- Սեպտեմբերի 28-29, հոկտեմբերի 4-8, 11-15, 30-31 և նոյեմբերի 1, 16 /ազգային արհեստի ու արվեստի, ՏՏ ոլորտի վերաբերյալ մասնագիտական կողմնորոշման դասեր/
- Նոյեմբերի 19 /Այց Գյումրիի ժողովրդական ճարտարապետության և քաղաքային կենցաղի թանգարան, Հովհաննես Շիրազի հուշատուն-թանգարան/
- Նոյեմբերի 20 /Գյումրիի Մհեր Մկրտչյանի հուշատուն-թանգարան, Մարիամ և Երանուհի Ասլամազյան քույրերի պատկերասրահ/
- Նոյեմբերի 29 /Այց Մինաս Ավետիսյանի տուն –թանգարան/
- Դեկտեմբերի 3 /Ծրագրի ամփոփում/
- Դեկտեմբերի 4 /Այց Մատենադարան, Երևանի ժամանակակից արվեստի և Երվանդ Քոչարի թանգարաններ/

**Ֆինանսավորման աղբյուրը**

- ՀՀ ԿԳՄՍՆ «Ընտանիք» ՄՊՍԿ

**Ծրագրի արդյունքները**

- Սեփական համայնքներում ազգային արհեստի ու արվեստի ուսուցմանը և մշակութային կյանքի աշխուժացմանը նպաստող վերապատրաստված մանկավարժներ և դեռահասներ
- Մասնագիտության ընտրության հարցում որոշակիորեն կողմնորոշված դեռահասներ, սեփական ունակություններն ու ներուժը գիտակցող մասնակիցներ
- Գյուղական համայնքներում և Ջավախքում արտադպրոցական կրթության գիտելիքները փոխանցած և գործունեություն ծավալած սաներ
- Թիմում աշխատելու ու արդյունավետ փոխհարաբերվելու ունակություններ և սեփական ուժերի նկատմամբ վստահություն ձեռք բերած դպրոցականներ
- Տարածաշրջանի արտադպրոցական կենտրոնների և գյուղական համայնքների միջնակարգ դպրոցների միջև համագործակցության ապահովվում,
- Հայաստանի և Ջավախքի պատմամշակութային վայրերին ծանոթացած սաներ
- Հայաստան–Ջավախք համագործակցության կապերի ամրապնդում
- Մարզի համայնքների միջև համագործակցության ամրապնդում

Պատասխանատուններ՝ Ս. Պետրոսյան

Ա. Գրիգորյան

Է. Ֆրանգուլյան

«ԸՆՏԱՆԻՔ» -Ն
ԱՆԻՎՆԵՐԻ
ՎՐԱ

2021